ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, JOURNALISM, ЖУРНАЛИСТИКА

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՆ՝ ՈՐՊԵՍ ՄԵԴԻԱԳՈՐԾԻՔ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ (2020-2023 ԹԹ.) *

ՀՏԴ 070:(054):94(4/9) *DOI: 10.52063/25792652-2025.2.25-215*

ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ
Երևանի պետական համալսարանի նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anna.mkrtichyan555@gmail.com
ORCID: 0009-0005-7469-9912

Ղարաբաղյան հակամարտության արդի փուլը և դրա հետևանքով ձևավորված ռազմաքաղաքական ու տեղեկատվական իրողությունները պահանջում են բազմակողմանի ուսումնասիրմամբ անդրադառնալ հիմնախնդրին առնչվող երևույթներին: Հոդվածի նպատակն է ներկայացնել Արդրբեջանի արտաքին տեղեկատվական քաղաքականությունը 44-օրյա պատերազմից հետո՝ մինչև 2023թ. Արցախի բնակչության բռնի տեղահանությունն ընդգրկող ժամանակահատվածում՝ վավերագրական կինոարտադրության օրինակով: Վիդեոբովանդակությունը դիտարկել ենք որպես մեդիագործիք տեղեկատվական պատերազմում, վեր հանել դրա կիրառման դրսևորումները՝ ուղղված ադրբեջանական հայատյաց քաղաքականության շարունակական խորացմանը:

Նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝ վերլուծել հետպատերազմական շրջանում Ադրբեջանի պետական կառույցների նախաձեռնությամբ ստեղծված և տեղական ու միջազգային տեղեկատվական միջավայրում տարածված վավերագրական ֆիլմերի բովանդակային շեշտադրումները՝ դիտարկելով դրանց կառուցվածքային, գաղափարախոսական և մեկնաբանողական առանձնահատկությունները, ինչպես նաև բացահայտել դրանցում արտացոլված իրողությունների ներկայացման մեթոդաբանական մոտեցումներն ու տեղեկատվական ազդեցության ռազմավարությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվել վավերագրական կինոյին՝ որպես հանրային գիտակցության ձևավորման, հուշապատմության կառուցման և տեղեկատվական ռազմավարությունների արտացոլման ազդեցիկ միջոցի: Ժամանակակից աշխարհում պատերազմները տեղի են ունենում ոչ միայն ռազմի դաշտում, այլև մեդիատիրույթում, որտեղ կիրառվում են տարաբնույթ հաղորդակցական ռազմավարություններ և տեղեկատվական մանիպուլյացիայի գործիքակազմ՝ հասարակական ընկալումները վերահսկելու և քաղաքական նպատակներ սպասարկելու համար:

* Հոդվածը ներկայացվել է 04.06.2025թ., գրախոսվել՝ 31.07.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

Աշխատանքը շարադրվել է քննական, համադրման և համեմատական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը նպատակաուղղված է իր դիրքորոշման և ձեռքբերումների ներկայացմանը, որտեղ վավերագրական ֆիլմարտադրությունն օգտագործվում է որպես քարոզչական գործիք՝ հաճախ միակողմանի գնահատականներով և ապատեղեկատվության տարրերով:

Հիմնաբառեր՝ *վավերագրական կինոարտադրություն, վավերագրական կինո, վիդեոբովանդակություն, մեդիագործիք, Արցախ, արցախյան (Լեռնային Ղարաբաղի) հիմնախնդիր, տեղեկատվական քաղաքականություն, Ադրբեջան, ապատեղեկատվություն, քարոզչություն:*

Նախաբան

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած և 44 օր տևած պատերազմի ընթացքում և դրանից հետո ընթանում էր նաև ակտիվ տեղեկատվական պատերազմ: Կեղծ թեզերի շահարկման նպատակով Ադրբեջանը լայնորեն կիրառում էր տարբեր մեդիագործիքներ, իսկ պատերազմից հետո վավերագրական ֆիլմերը դարձան արդյունավետ միջոց՝ լսարանի գիտակցության և հոգեկանի վրա ներազդման տեսանկյունից: Հենց այդ շրջանում էր, որ Ադրբեջանը, ի թիվս այլ հարցերի և պահանջների, սկսեց ակտիվորեն շրջանառել իր մշակույթի և պատմության մասին հորինված տեղեկատվություն: Վավերագրական ֆիլմերը դարձան Ադրբեջանի արտաքին տեղեկատվական քաղաքականության առանցքային գործիքներից՝ այդ կերպ նենգափոխված «իրականություն» ցույց տալով աշխարհին կամ գոնե նրանց, ում քիչ բան է հայտնի արցախյան հիմնախնդրի և հայ-ադրբեջանական հակամարտության մասին:

Վավերագրական կինոն՝ որպես տեղեկատվական պատերազմի և հանրային հիշողության մոդելավորման գործիք

Կինոտարեգրությունը, որը կինովավերագրության տեսակներից է, արվում է ոչ թե օպերատիվ իրազեկման, այլ պատմությանն ի պահ տալու նպատակով: Դիտարկելով վավերագրական կինոյի դերը հիշողության քաղաքականության, հանրային կարծիքի ձևավորման և ինքնության վերաիմաստավորման գործընթացում՝ հարկ է նկատել, որ կինոն չափազանց կարևոր նշանակություն ունի քարոզչության առումով՝ հատկապես հետպատերազմյան քարոզչական համատեքստում: Ի վերջո, կինոն ստեղծում է վարքի մոդել, կանխատեսում արժեքներ և մոտեցումներ (Айрапетова 128): Արվեստագիտական, տեսաբանական և նարատիվ մոտեցումների միջոցով կինոն վերածվում է տեղեկատվական ազդեցության հզոր գործիքի:

«Վավերագրական ֆիլմ» տերմինն (անգլ. documentary) առաջին անգամ ժանրի առնչությամբ օգտագործել է բրիտանացի կինոռեժիսոր Ջոն Գրիերսոնը՝ «անգլ. The Moviegoer)» կեղծանունով, Ռոբերտ Ֆլաերտիի «Հարավային ծովերի Մոանան» ֆիլմի գրախոսության մեջ («The New York Sun», 8 փետրվարի, 1926թ.): Վավերագրական ֆիլմը սովորաբար հիմնված է իրական իրադարձությունների և մարդկանց վրա: Ջ. Գրիերսոնը վավերագրական ֆիլմը սահմանեց որպես «իրականության ստեղծագործական մշակում»՝ ընդգծելով, որ կինոյի լեզուն կատարում է ոչ միայն հաղորդակցական, այլև գեղագիտական գործառույթ (Айрапетова 130):

Հաղորդակցվելով զանգվածային լսարանի հետ՝ վավերագրական ֆիլմը՝ որպես մեդիաարտադրանք, ունակ է ձևավորելու որոշակի պատկերացումներ և ունենալու ազդեցություն մարդու աշխարհայացքի վրա (Смирнова 69): Վավերագրության

ավանդույթն օժտված է մեզ փոխանցելու իրականության տպավորության կարողության ուժով. այն զորեղ տպավորություն է (Nichols 13): Միաժամանակ այն ազդեցիկ և կիրառելի գործիք է տեղեկատվական հակապայքարում՝ տեղեկատվական առավելության հասնելու կամ արտերկրների (հակառակորդի) նկատմամբ առաջնահերթության պահպանման համար, տեղեկատվական օբյեկտների վրա տեղեկատվական կամ ֆիզիկական ներազդեցությամբ և նրանց կողմից նմանատիպ ներազդեցությունից պաշտպանվելու ճանապարհով (Ղալեչյան 79): Բազմաթիվ են դեպքերը, երբ պատմության մասին որոշակի պատկերացումներ ստեղծում (հորինում) են պետական վերնախավը կամ մտավորականության որոշ շերտեր, և դրանք այնուհետև կրթության համակարգի և քարոզչության միջոցով ներմուծվում են հասարակական շրջանակներ՝ հիմք դառնալով պատմության մասին անհատական պատկերացումների ձևավորման (տես՝ Halbwachs):

Վավերագրական ֆիլմերը կարող են ծառայել որպես «միջանկյալ հիշողության վայրեր», որտեղ անհատական և կոլեկտիվ հիշողությունները միաձուլվում են՝ ստեղծելով նոր հանրային պատմություն (տես՝ Assmann): Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է փաստել, որ վավերագրական ֆիլմերը կարող են նաև կողմնակալ և ընտրողական լինել տեղեկատվության մատուցման հարցում, և դիտողների համար կարևոր է դրանք դիտարկել քննադատաբար և թերահավատության առողջ չափաբաժնով: Դժվար է ընդհանրացումներ անել այն մասին, թե ինչպես են վավերագրական ֆիլմերն ազդում պատերազմի ընթացքի վրա կամ հետպատերազմյան շրջանում հանրության տրամադրությունների, վարքագծի, տեսակետների վրա, քանի որ կոնկրետ ֆիլմի ազդեցությունը կախված է մի շարք գործոններից, ինչպիսիք են՝ ֆիլմի հասանելիությունն ու ազդեցիկությունը, դրա թողարկման ժամկետը և այն քաղաքական և սոցիալական համատեքստը, որում հրապարակվել է: Այնուամենայնիվ, պատմությանը հայտնի են որոշ վավերագրական ֆիլմեր, որոնք հենց պատերազմի ժամանակ զգալի ազդեցություն են ունեցել հասարակական կարծիքի և քաղաքականության վրա: Օրինակ՝ Վիետնամի պատերազմի ժամանակ «Սրտեր և մտքեր» (1974թ.) վավերագրական ֆիլմը խիստ քննադատության էր ենթարկում ԱՄՆ քաղաքականությանը Վիետնամում և վերագրվում էր նրան, որ օգնեց հասարակության կարծիքը շրջել պատերազմի դեմ: Նույնը կարելի է ասել նաև «Ձմեռային զինվորը» (1972թ.) վավերագրական ֆիլմի մասին, որն ուսումնասիրում և բացահայտում էր Վիետնամում ամերիկացի զինվորների կողմից իրականացված վայրագությունները և նպաստում հակապատերազմական տրամադրությունների աճին:

Պատերազմի վավերագրողները հաճախ օգտագործում են ռազմագերիներին, քաղաքացիական անձանց, զինվորներին, տեղահանվածներին, փախստականներին, խաղաղ բնակչությանը՝ որպես վավերագրական ֆիլմի «գործիք»: Այդ առումով բացառություն չէ նաև Արցախյան պատերազմը և հայ-ադրբեջանական հակամարտությունը:

Ադրբեջանական ֆիլմերը՝ որպես հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ քարոզչական գործիք

Արցախի հայկական պատմության խեղաթյուրման գործին Ադրբեջանը լծված է արդեն մի քանի տասնամյակ՝ սկսած հայ բնակչության «եկվորության» թեզի «ապացուցման» և միջազգային գիտական ու հասարակական շրջաններում դրա տարածման փորձերից մինչև «ագրեսիվ, դավադիր թշնամու» կերպարի ձևավորում:

Ադրբեջանը միշտ է և՛ ներքին, և՛ արտաքին տիրույթում վարել հստակ հակահայ քաղաքականություն, որը երկրի էթնոքաղաքականության առանձնահատկություններից է: Այսօր էլ այդ երկրում դեռ մանկուց երեխաները դաստիարակվում են ակնհայտ հայատյացությամբ, ինչը քողարկվում է

հայրենասիրությամբ: Սա նկատելի է նաև վավերագրական ֆիլմերում: «BBC News»-ի ռուսական ծառայության կողմից պատրաստված «Нагорный Карабах: жизнь после войны» (https://www.youtube.com) («Լեռնային Ղարաբաղ. կյանքը պատերազմից հետո», 2021թ.) ֆիլմում ներկայացվում է երկու երկրներում մարդկանց ճակատագրերը, ովքեր ստիպված են եղել լքել իրենց տները կամ հակառակը: Հերոսներից մեկը՝ պատերազմի ընթացքում ականապայթյունային բեկորային վիրավորում ստացած ադրբեջանցի է, ով պատմում է՝ ինչպես է ստացել վնասվածքը: Նկարահանման ողջ ընթացքում ներկա է նաև նրա անչափահաս որդին: Լրագրողի հարցին, թե ինչ է զգում այն մարդու (մարդկանց) նկատմամբ, ում պատճառով հայրը տուժել է, երեխան պատասխանում է. «Կմեծանամ, կգրանցվեմ սահմանապահ զորքերում, կգնամ Հայաստան, կսպանեմ հայերին և վրեժ կլուծեմ հայրիկի համար»: Նմանատիպ հայատյաց և ապատեղեկատվություն պարունակող օրինակները հաճախ հանդիպում են ադրբեջանական վավերագրական ֆիլմերում: Այս ֆիլմի օրինակով կարելի է արձանագրել, որ ադրբեջանական մեդիատեքստերը ոչ միայն փաստագրում են պատերազմական հետևանքները, այլև օգտագործվում են ազգային հիշողության ձևավորման և սերունդների շրջանում հակահայ թշնամանք սերմանելու նպատակով՝ հայրենասիրության քողի տակ վերարտադրելով էթնիկ հակամարտության լեզուն ու պատկերացումը: Այս համատեքստում վավերագրական կինոն հանդես է գալիս որպես գաղափարախոսական գործիք, որն ազդում է ոչ միայն ներկայի ընկալման, այլև ապագա սերնդի ինքնության կառուցման վրա:

Նպատակ ունենալով հաստատել Ադրբեջանի պաշտոնական նարատիվը և ամրապնդել ազգային ինքնագիտակցությունը, միաժամանակ ազդելով հասարակական ընկալումների վրա՝ 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի մշակույթի նախարարությունը, Հանրային հեռուստաընկերությունը (AzTV) և պետական պատվերով շատ այլ կառույցներ և ստեղծագործական խմբեր ակտիվորեն լծվել են վավերագրական ֆիլմերի ստեղծման գործին («Shusha, you are free!» (թարգմ. «Շուշի, դու ազատ ես»), «We» (թարգմ. «Մենք»), «Fulya» («Ֆուլյա») և այլն): Վերջինը՝ «Ֆուլյա»-ն, արտադրվել է «Ադրբեջանֆիլմ» ստուդիայի (Ադրբեջան) և «Dada Yapım» ընկերության (Թուրքիա) հետ համատեղ: Արձանագրենք՝ պատերազմից հետո Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունն ուղղված է ռազմական գործողությունների դաշտում ձեռքբերումների քարոզչությանը և հակամարտության պատմության խեղաթյուրմանը: Վավերագրական ֆիլմարտադրությունը դարձել է այդ նպատակին հասնելու գործիքներից մեկը:

Հետպատերազմյան Ադրբեջանում տեղի միջազգային հեռուստաալիքի՝ «CBC TV Azerbaijan»-ի նկարահանած վավերագրական ֆիլմերից մեկը՝ «Хроника второй Карабахской войны: повесть о 44 днях» (թարգմ. «Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակագրությունը. պատմություն 44 օրերի մասին»), փաստագրական զեկույց է պատերազմի ընթացքում Արցախում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Ֆիլմում, սպասելիորեն, փորձ է արվում որպես բացարձակ ագրեսոր ներկայացնելու հայկական կողմին: Լրագրողն իր խոսքում ներկայացնում է պատերազմի սկիզբը՝ նշելով, որ սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան հայկական զինված ուժերը շփման գծի ողջ երկայնքով անցել են հարձակման: Պատերազմի ընթացքը նկարագրելուց հայկական կողմին է վերագրվում Ադրբեջանի կիրառած ֆոսֆորային զենքը, խաղաղ բնակչության ռմբակոծումը և այլն: Ընդհանուր առմամբ, ֆիլմերում շրջանառվող կեղծ թեզերից և քարոզչական տարրերից հարկ է առանձնացնել մի քանիսը, այն է՝ «Պատերազմը նախաձեռնել է Հայաստանը», «Պատերազմը, բռնազավթված տարածքներն ազատագրելու պարտադրված միջոց էր», «Ադրբեջանը դառնում է հակամարտության հաղթող», «Պատերազմի լուծումը հեշտ և արագ տրվեց ուժեղ առաջնորդության շնորհիվ», «Հայաստանը պատրաստ չէ երկխոսության և հակամարտության խաղաղ կարգավորման», «Հայաստանը

խախտում է հրադադարը և շարունակում է հարձակվել ադրբեջանական դիրքերի վրա» և այլն:

2020 թ. նոյեմբերի 9-ից հետո Հայաստանի և Արցախի դեմ ադրբեջանական ագրեսիայի տարբեր դրսևորումների ընթացքում բազմիցս ականատես ենք եղել տեղեկատվական գրոհների ակտիվացման և համեմատաբար ավելի պասիվ փուլերի: Ընդ որում, ադրբեջանական քարոզչության կարևոր առանձնահատկություններից է, որ տեղեկատվական գրոհներում նոր նարատիվների տարածման հարցում առաջնորդող դերը պատկանում է Ադրբեջանի նախագահին: Իշխանությունների կողմից վերահսկվող, ուղղորդվող մեդիան նշված քարոզչությանը լրացնող դեր է կատարում և սերտաճած է պետական քարոզչությանը: Ավելին, Ադրբեջանն իր քարոզչական արշավները կազմակերպում է՝ հաշվի առնելով տարբեր թիրախային լսարաններ. ներքին, միջազգային, հայկական: Յուրաքանչյուր լսարանի համար ուղերձները փաթեթավորվում են տարբեր կերպ (https://theanalyticon.com): Պատահական չէ, որ ադրբեջանական վավերագրական ֆիլմերը տարածվում են ոչ միայն ադրբեջաներեն, այլև այլ լեզուներով: Մասնավորապես՝ «CBC TV Azerbaijan»-ի նկարահանած վավերագրական ֆիլմերը՝ «Триумф: кодовое слово «железный кулак»: Карабах» (թարգմ. «Հաղթանակ. կոդային բառը՝ երկաթե բռունցք. Ղարաբաղ»), «День расплаты: детали антитеррористической операции» (թարգմ. «Վրեժի օրը. հակաահաբեկչական գործողության մանրամասները») և այլն ուղղված են ռուսալեզու լսարանին: Ադրբեջանի նախագահի դեռևս 2011թ. -ի հրամանագրով և պետական համապատասխան ծրագրի շրջանակում ստեղծված «Վիրտուալ Ղարաբաղ» տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից նկարահանած «Карабах: наследие наших предков» (թարգմ. «Ղարաբաղ. մեր նախնիների ժառանգությունը») վավերագրական ֆիլմը ևս ուղղված է ռուսալեզու լսարանին՝ ներկայացնելով պատմական ակնհայտ կեղծ թեզեր, հորինված պատմություն, ձեռքբերումների քարոզչություն, հակամարտության պատմության խեղաթյուրում և այլն:

Եթե վավերագրական կինոն դիտարկենք որպես տվյալ ժամանակի տեսագրային փաստագրում, ապա ադրբեջանցի օգտատերերի տարածած տեսանյութերը կարելի է համարել վավերագրության ոչ պրոֆեսիոնալ ձևաչափ: Ադրբեջանի զինծառայողները ոչ միայն նկարահանել են իրենց մասնակցությունը ռազմագերիների խոշտանգումներին և սպանություններին, այլև հետևողականորեն տարածել այդ նյութերը սոցիալական ցանցերում, որոշ դեպքերում՝ ուղարկել տուժողների հարազատներին: Թեև վավերագրական ֆիլմերը պետք է հիմնվեն փաստերի վրա, սակայն ադրբեջանցի շատ վավերագրողներ ներկայացնում են սուբյեկտիվ մեկնաբանություններ՝ խեղաթյուրելով անցյալը, սպասարկելով քաղաքական նպատակներ և ազդելով ներքին ու արտաքին լսարանի ընկալումների վրա:

Եզրահանգումներ

Ժամանակակից հասարակություններում տեղի ունեցող փոխակերպումներն արտացոլվում են հասարակական գիտակցության մեջ թե՛ ստույգ, թե՛ աղավաղված ձևով՝ առաջացնելով մոլորություններ, կարծրատիպեր, միֆեր և այլն (Դեմիրճյան 11): Հետևաբար, վավերագրական ֆիլմարտադրության օրինակով կարելի է փաստել, որ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունն ուղղված է իր ձեռքբերումների քարոզչությանը ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մակարդակներում: Քարոզչության հիմքում դրվում է Հայաստանը որպես թշնամի, ագրեսոր և պատերազմական հանցագործությունների հեղինակ ներկայացնելը: Ադրբեջանական քարոզչամեքենան, որ հակահայկականության մասով մշտապես կատարելագործման ուղի է անցնում, պատերազմից հետո աչքի է ընկնում ռազմավարական

հաղորդակցության ավելի կոպիտ գործիքների կիրառմամբ՝ այդ թվում շեշտը դնելով հոգեբանական ներազդման միջոցներից հիշողության քաղաքականության վրա (Համբարձումյան 89):

Ռուս ռազմական լրագրող Տիմոֆեյ Երմակովը, ներկայացնելով իր «Անկոտրում Արցախ» (Youtube 2020) վավերագրական ֆիլմը, որը պատմում է Ադրբեջանի կողմից Արցախի խաղաղ բնակչությանը թիրախավորելու մասին, նշել է. «Մենք կանխամտածված հրաժարվել ենք մեկնաբանել ֆիլմում ներկայացված կադրերը, որպեսզի դրանք չխանգարեն անաչառ ընկալելու տեսածը» (Armenpress 2020): Այս համատեքստում ակնհայտ է, որ վավերագրական կինոն կարող է հանդես գալ թե՛ որպես քարոզչության միջոց, թե՛ որպես փաստերի անաչառ արձանագրման հարթակ՝ կախված հեղինակային դիտանկյունից և կիրառվող մեթոդաբանությունից: Մինչդեռ վավերագրական կինոն, երբ ենթարկվում է միակողմանի մեկնաբանությունների և փաստերի ընտրողական ներկայացման, կարող է վերածվել տեղեկատվական մանիպուլյացիայի գործիքի՝ խաթարելով իրականության ընկալումը:

Վավերագրական կինոն՝ որպես հանրային հիշողության և քաղաքական հաղորդակցության հարթակ, ներկայում ձևավորվում է երկակի բնույթով. այն կարող է ծառայել ինչպես փաստերի անաչառ վավերագրման, այնպես էլ գաղափարախոսական մանիպուլյացիայի նպատակների՝ պայմանավորված հեղինակային դիտանկյունով և մեթոդաբանական մոտեցումներով: Ադրբեջանի վավերագրական արտադրանքի դեպքում առավելապես ակնհայտ է վիզուալ քարոզչության ռազմավարական օգտագործումը՝ հակամարտության պատկերն իր օգտին վերաիմաստավորելու և թշնամու կերպարն ինստիտուցիոնալ մակարդակով վերարտադրելու նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ադրբեջանի տեղեկատվական գրոհն Արցախի և Հայաստանի դեմ. ի՞նչ կարող ենք հակադրել». Անալիտիկոն, վերլուծաբան Տարոն Հովհաննիսյան, 2023, https://tinyurl.com/4zbrhpe2, Մուտք՝ 08. 05. 2025:
2. Դեմիրճյան, Մովսես. Ազանգվածային գիտակցության միֆերի փոխակերպումները ճգնաժամային իրավիճակներում: «Մեդիան և տեղեկատվությունը 21-րդ դարի պատերազմներում». *Գիտաժողովի նյութեր: ԲՊՀ հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների գիտաուսումնական կենտրոն*, 2021, էջ 11:
3. Համբարձումյան, Նաիրա. Հիշողության քաղաքականությունը Ադրբեջանի էթնոքաղաքական կամարտահայտության գործիք և դրա քարոզչական դրսևորումները վավերագրական կինոյում. *«Գիտական Արցախ»*, № 1(16), 2023, Երևան, էջ 89:
4. Ղալեչյան, Արմեն. «Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում». *Նորավանք* ԳԿՀ, 2016, Երևան, էջ 79:
5. «Ռուս լրագրողները ներկայացրել են «Անկոտրում Արցախ» վավերագրական ֆիլմը». Armenpress, 2020, https://armenpress.am/hy/article/1032660, Մուտք՝ 18. 05. 2025:
6. Айрапетова, Виктория. «Документальный фильм как жанр киноискусства и регистр». *«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում»*, 1 (26), 2019, Երևան, էջ 128-138:
7. «Нагорный Карабах: жизнь после войны». Документальный фильм, 2021, https://www.youtube.com/watch?v=v_iywHNb0-g, Մուտք՝ 28. 05. 2025:
8. «Несломленный Арцах». Документальный фильм, 2020, https://www.youtube.com/watch?v=5G5Z1EiUMw0, Մուտք՝ 15. 05. 2025:

9. Смирнова, Валерия. «Документальное кино в системе массовой коммуникации: источник формирования знаний и представлений у аудитории». *Коммуникология: электронный научный журнал*, 2019, Том 4, №1, с. 69.

10. Assmann, Aleida. *Cultural Memory and Western Civilization: Functions, Media, Archives*. Cambridge University Press, 2011.

11. Nichols, Bill. “Introduction to Documentary”. Indiana University Press, Bloomington & Indianapolis, 2001, p. 13, https://www.kufunda.net/publicdocs/Bill_Nichols___Introduction_to_documentary-1-3and6.pdf, Մուտք՝ 25. 05. 2025:

12. Halbwachs, Maurice. *On Collective Memory*. Chicago, University of Chicago Press, 1992.

WORKS CITED

1. Adrbejani teghekatvakan grohn Arts’akhi yev Hayastani dem. i?nch’ karogh yenk’ hakadrel, verlutsaban Taron Hovhannisyan [Azerbaijan's Information attack against Artsakh and Armenia: What can we do to counter it?] 2023. (in Armenian) https://theanalyticon.com/ogostos-2023/%d5%a1%d5%a4%d6%80%d5%a2%d5%a5%d5%bb%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%bf%d5%a5%d5%b2%d5%a5%d5%af%d5%a1%d5%bf%d5%be%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%a3%d6%80%d5%b8%d5%b0%d5%b6-%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab/ Accessed: 08.05.2025

2. Demirchyan, Movses. Zangvatsayin gitakts’ut’yan miferi p’vokhakerpumnery chgnazhamayin iravichaknerum. «Median yev teghekatvut’yuny 21-rd dari paterazmnerum», Gitazhoghovi nyut’er. BPH hanrayin haghordakts’man tekhnologianeri gitausumnakan kentron, ej 11, [Transformations of Mass Consciousness Myths in Crisis Situations] 2021. (in Armenian)

3. Hambardzumyan, Naira. Hishoghut’yan k’aghak’akanut’yuny Adrbejani et’nok’aghak’akan kamartahaytut’yan gortsik’ yev dra k’arozch’akan drsevorumnery vaveragrakan kinoyum, [The Politics of Memory as a Tool of Azerbaijan’s Ethno-political Strategy and its Propaganda Manifestations in the Media, Yerevan] 2023, «Gitakan Arts’akh», № 1(16), ej 89. (in Armenian)

4. Ghalech’yan, Armen. Teghekatvakan payk’ary rrazmakan volortum, [Information Warfare in the Military Sphere, Yerevan] 2016, Noravank’ GKH, ej 79. (in Armenian)

5. Rus Iragroghnery nerkayats’rel yen «Ankotrum Arts’akh» vaveragrakan filmy, ["Russian Journalists Presented the Documentary Film "Indestructible Artsakh."] 2020, https://armenpress.am/hy/article/1032660 Accessed: 18.05.2025 (in Armenian)

6. Ajrapetova, Viktoriâ. Dokumental'nyj fil'm kak žanr kinoiskusstva i registr, «Otar lezunery bardzraguyn dprots’um», 1 (26), ej 128-138, [Documentary as a Cinema Genre and a Register, Yerevan] 2019, (in Russian)

7. Nagornyy Karabakh: Zhizn' posle voyny, Dokumental'nyy fil'm, ["Nagorno-Karabakh: Life after the war."] 2021, https://www.youtube.com/watch?v=v_iywHNb0-g Accessed: 28.05.2025. (in Russian)

8. Neslomlennyy Artsakh, Dokumental'nyy fil'm, ["Unbroken Artsakh". Documentary,] 2020, https://www.youtube.com/watch?v=5G5Z1EiUMw0 Accessed: 15.05.2025 (in Russian)

9. Smirnova, Valeriya. Dokumental'noye kino v sisteme massovoy kommunikatsii: istochnik formirovaniya znaniy i predstavleniy u auditorii, Kommunikologiya: elektronnyy nauchnyy zhurnal, Tom 4. №1. s.69 [Documentary Film in the Mass Communication System: A Source of Formation of Knowledge and Ideas Among the Audience] 2019. (in Russian)

DOCUMENTARY FILM AS A MEDIA TOOL IN AZERBAIJAN'S INFORMATION POLICY AFTER THE 44-DAY WAR (2020–2023)

ANNA MKRTICHYAN
Yerevan State University, Faculty of Jounralism,
Chair of New Media and Communication,
Lecturer, Ph.D. in Philology,
Yerevan, the Republic of Armenia

The current phase of the Nagorno-Karabakh conflict and the resulting politico-military and informational realities necessitate a comprehensive examination of the issue. The purpose of the article is to analyze Azerbaijan's informational policy in the period following the 44-day war up to the forced displacement of the Armenian population of Artsakh in 2023, using documentary film production. We observe the video content as a media tool in the context of an information war, identifying its uses in deepening and perpetuating Azerbaijan's anti-Armenian policy.

To achieve the research objective, we have set the following goals: to analyze the content emphases of documentary films produced under the initiative of Azerbaijan's state structures in the post-war period and disseminated in local and international informational domains, examining their structural, ideological, and interpretative features, as well as identifying the methodological approaches used to present the depicted realities and the strategies of informational influence.

Special attention is given to documentary film as a powerful medium for shaping public consciousness, constructing collective memory, and reflecting broader informational strategies. In today's world, warfare occurs not only on the battlefield but also within the media sphere, where diverse communication strategies and tools of information manipulation are employed to shape public perception and serve political ends.

The research is conducted using analytical, critical and comparative methods.

The main conclusion of the research is that, following the 44-day war Azerbaijan's information policy has been strategically oriented toward promoting its narrative of achievement and position, with documentary film production serving as a key propaganda instrument - frequently marked by one-sided assessments and elements of disinformation.

Keywords: *Documentary Film Production, Video Content, Documentary Film, Media Tool, Artsakh, Artsakh (Nagorno-Karabakh) Conflict, Information Policy, Azerbaijan, Disinformation, Propaganda.*

ДОКУМЕНТАЛЬНЫЙ ФИЛЬМ КАК МЕДИАИНСТРУМЕНТ В ИНФОРМАЦИОННОЙ ПОЛИТИКЕ АЗЕРБАЙДЖАНА ПОСЛЕ 44-ДНЕВНОЙ ВОЙНЫ (2020–2023 ГГ.)

АННА МКРТИЧЯН
преподаватель кафедры новых медиа и коммуникации факультета журналистики Ереванского государственного университета,
кандидат филологических наук,
г. Ереван, Республика Армения

Современный этап карабахского конфликта и сформировавшиеся в его результате военно-политические и информационные реалии требуют

всестороннего изучения явлений, связанных с данным конфликтом. Целью данной статьи является анализ внешней информационной политики Азербайджана в период с окончания 44-дневной войны до насильственного перемещения населения Арцаха в 2023 году на примере документального кинопроизводства. Видеоконтент рассматривается как медиаинструмент в информационной войне, раскрываются формы его применения, направленные на углубление антиармянской политики Азербайджана.

Для достижения поставленной цели были выдвинуты следующие задачи: проанализировать содержательные акценты документальных фильмов, созданных по инициативе государственных структур Азербайджана в послевоенный период и распространённых в местном и международном информационном пространстве, рассматривая при этом их структурные, идеологические и интерпретационные особенности, а также выявить методологические подходы к представлению отражённых в них реалий и стратегии информационного воздействия.

Особое внимание уделено документальному кино как эффективному средству формирования общественного сознания, конструирования исторической памяти и отражения информационных стратегий. В современном мире войны ведутся не только на полях сражений, но и в медиапространстве, где применяются различные коммуникативные стратегии и инструменты информационных манипуляций с целью управления общественным восприятием и обслуживания политических интересов.

Исследование выполнено с использованием критического, сопоставительного и сравнительного методов.

Основной вывод работы заключается в том, что после 44-дневной войны информационная политика Азербайджана направлена на представление своей позиции и достижений, при этом документальное кино используется в качестве пропагандистского инструмента, зачастую с односторонними оценками и элементами дезинформации.

Ключевые слова: *документальное кинопроизводство, видеоконтент, документальный фильм, медиаинструмент, Арцах, проблема Арцаха (карабахский конфликт), информационная политика, Азербайджан, дезинформация, пропаганда.*